

ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Դեկտ. 6, 2007

Հայաստանի Հանրապետության նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանը առաջիկայ շաբաթ Լոս Անջելոս է ժամանելու, ուր իբրև գլխավոր բանախօս ելոյթ է ունենալու Արեւմտեան Ամերիկայի Հ.Յ.Դաշնակցության Կեդրոնական Կոմիտեի կազմակերպած Հ.Յ.Դ. Օրուայ տօնակատարութեանը: Հ.Յ.Դ. Օրուայ տօնակատարութիւնը տեղի կունենայ Շաբաթ, Դեկտեմբեր 15-ի երեկոյեան ժամը 6-ին, Գլէնդէլ միջնակարգ դպրոցի հանդիսասրահում: Վահան Յովհաննիսեանը պետական ծառայութեան մեծ փորձ ունի Հայաստանի Հանրապետութեան օրէնսդրական ու պետական կառավարման ոլորտներում: Պաշտօնավարութեան երկրորդ ժամանակաշրջանով ընտրուել է Հայաստանի խորհրդարանի փոխնախագահ: Նշենք նաեւ, որ կուսակցական կամ պետական հանգամանքներով Վահան Յովհաննիսեանը բազմիցս այցելել է Լոս Անջելոս, ուր հանդէս է եկել հրապարակային ելոյթներով: Նա Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ է:

Կենսագրական լրացուցիչ տեղեկութիւններ



Վահան Յովհաննիսեանը ծնուել է 1956թ. Օգոստոսի 16-ին Երեւանում:

1978թ. աւարտել է Մոսկուայի մանկավարժական համալսարանը: Պատմաբան: Հնագէտ: Պատմական գիտութիւնների թեկնածու:

1980-1989թթ. «Երեբունի» թանգարանում եղել է գիտաշխատող, գիտահետազօտական բաժնի վարիչ, 1989թ. Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան բաժնում՝ գիտաշխատող:

1990-1992թթ. մասնակցել է Արցախի ազատագրական պայքարին:

1990-1992թթ.՝ ՀՀ Հայաստանի Կենտրոնական կոմիտեի, 1992-1995թթ.՝ ՀՀ Բիւրոյի անդամ: 1995-1998թթ. բանտարկուած է եղել՝ քաղաքական դրդապատճառներով (հետագայում չհաստատուած մեղադրանքներով):

1998-1999թթ. աշխատել է ՀՀ Նախագահի խորհրդական, տեղական ինքնակառավարման հարցերով յանձնաժողովի նախագահ:

1999-2003թթ.՝ Աժ պատգամաւոր (թիւ 17 ընտրատարածք): Աժ պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի նախագահ: ՀՀ Խմբակցութեան անդամ:

2003-2007թթ.՝ Աժ պատգամաւոր (համամասնական ընտրակարգ, ՀՀ): ՀՀ

Խմբակցութեան անդամ: ՀՀԴ Բիւրոյի անդամ:

2003թ. Յունիսի 12-ին ընտրուել է ԱԺ նախագահի տեղակալ:

2007թ. Մայիսի 12-ին ԱԺ պատգամաւոր է ընտրուել համամասնական ընտրակարգով
ՀՀԴ կուսակցութիւնից:

2007թ. Յունիսի 7-ին ընտրուել է ԱԺ փոխնախագահ:

Անուսնացած է, ունի երկու երեխայ:

ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակ
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467